ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի 31.10.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 14-ը (տասնչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական,
4. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
5. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
8. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
9. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
12. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
14. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. 1 2019-2020 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի 4-րդ կուրսերի և մագիստրոսի կրթական ծրագրով 2-րդ կուրսերի ուսանողների պրակտիկայի վայրերի փոփոխության հաստատման մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

2. ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանի ներկայացրած զեկուցագիր-դիմումի մասին

(**հաղ.՝** ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան)

3. Համալսարանի «Տնտեսական գործունեության, գնումների համակարգման բաժն»-ի սպասարկող անձնակազմի աշխատակցուհի Թուխիկ Համբարձումի Մարտիրոսյանի ներկայացրած դիմումի մասին

(**հաղ.՝** ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան)

4. 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի ներբուհական ընդունելության քննություններն անցկացնող դասախոսների վարձատրության մասին

(**հաղ.՝** ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան)

5. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի 4-րդ կուրսերի և մագիստրոսի կրթական ծրագրով 2-րդ կուրսերի ուսանողների պրակտիկայի վայրերի փոփոխության հաստատման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակում պրակտիկա է նախատեսված բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսերի և մագիստրոսի կրթական ծրագրով 2-րդ կուրսերի ուսանողների համար: Տիկին Ավետիսյանը ներկայացրեց պրակտիկաների ժամանակացույցն ու անցկացման վայրերի փոփոխությունները, նշելով, որ բակալավրի կրթական ծրագրով 4-րդ կուրսերի պրակտիկայի ժամկետներն են. 04.11.2019թ.-
06.12.2019թ., մագիստրոսի կրթական ծրագրով 2-րդ կուրսերի գիտահետազոտական պրակտիկայի ժամկետները. 04.11.2019թ.-29.11.2019թ.-ն: Տիկին Ավետիսյանի կողմից

նշվեց նաև, որ համապատասխան բոլոր փաստաթղթերը ուսանողների կողմից ներկայացվել են սահմանված ժամկետներում, այդ թվում առկա են նաև դպրոցների տնօրենների միջնորդագրերը՝ պրակտիկաների անցկացման համար:
Պրակտիկաների ժամանակացույցն ու անցկացման վայրերի փոփոխությունները կցված են արձանագրությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝
Հաստատել 2019-2020 ուստարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի 4-րդ կուրսերի և մագիստրոսի կրթական ծրագրով՝ 2-րդ կուրսերի ուսանողների պրակտիկաների անցկացման վայրերի փոփոխությունները:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.2 **Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմություն մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Մեյրանի Վարդանյանի պրակտիկային վերաբերող դիմումի քննարկման մասին**

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց նաև սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմություն մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Մեյրանի Վարդանյանի դիմումը, որով նա խնդրում էր, որ թույլատրեն իր պրակտիկան անցկացնել Գյումրու համայնքապետարանի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանում, որտեղ աշխատում է որպես վերականգնող մասնագետ: Պարոն Սերոբյանը հարց ուղղեց տիկին Ավետիսյանին, թե պրակտիկան գիտահետազոտական է, թե՞ մանկավարժական: Տիկին Ավետիսյանը նշեց, որ մագիստրոսի պրակտիկան գիտամանկավարժական է: Պարոն Սերոբյանը նշեց, որ նպատակահարմար է, որ մագիստրոսը պրակտիկան անցկացնի ըստ ամբիոնի կողմից նախօրոք ներկայացված վայրի, այսինքն բուհի համապատասխան ամբիոնում անցկացնի իր պրակտիկան և հարցը դրեց քվեարկության:
ՈՐՈՇԵՑԻՆ՝
Մերժել սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմություն մասնագիտությամբ 2-րդ կուրսի ուսանողուհի Ռոզա Մեյրանի Վարդանյանի դիմումը:
Մագիստրոսն իր պրակտիկան պետք անցկացնի ըստ ամբիոնի կողմից նախօրոք ներկայացրած պրակտիկայի անցկացման վայրի:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Տիկին Ավետիսյանն առաջարկեց միջնորդագրերով պրակտիկան անցկացնող բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողների դիմումների ու միջնորդագրերի բնօրինակները ներառել և պահել նրանց անձնական գործերում, իսկ պատճենները, որպես հիմք՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնում:

Առաջարկը ընդունելի էր ռեկտորատի անդամների կողմից: Պարոն Սերոբյանը առաջարկը դրեց քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Միջնորդագրերի հիման վրա պրակտիկան անցկացնող բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողների դիմումների ու միջնորդագրերի բնօրինակները ներառել և պահել նրանց անձնական գործերում, իսկ պատճենները, որպես հիմք՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանի ներկայացրած զեկուցագիր-դիմումի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ իրեն ուղղված ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանի զեկուցագիր-դիմումում դիմումատուն տեղեկացնում է, որ սույն թվականի օգոստոսի 19-ից մինչև օգոստոսի 25-ը ընկած ժամանակահատվածում ՌԴ-ի Ուֆա քաղաքում մասնակցել է «Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի» 12-րդ համագումարին, որտեղ հանդես է եկել զեկուցումով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համագումարի ընթացքում Ս. Սարգսյանը գտնվել է արձակուրդում, ապա գործուղման ծախսերը անձնական միջոցներից է հոգացել, խնդրում է դրամական աջակցության ձևով փոխհատուցել միայն ճանապարհածախսը՝ 185. 153 (մեկ հարյուր ութսունհինգ հազար հարյուր հիսուներեք) ՀՀ դրամի չափով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Սույն թվականի օգոստոսի 19-25-ը ՌԴ ՈՒֆա քաղաքում տեղի ունեցած «Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի» 12-րդ համագումարին մասնակցելու կապակցությամբ՝ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանին, ներկայացված համապատասխան փաստաթղթերի հիման վրա, հատկացնել ճանապարհածախսի գումարը, որը կազմում է 185 153 (մեկ հարյուր ութսունհինգ հազար հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

3. ԼՍԵՑԻՆ՝

Համալսարանի «Տնտեսական գործունեության, գնումների համակարգման բաժնի» սպասարկող անձնակազմի աշխատակցուհի Թուխիկ Համբարձումի Մարտիրոսյանի ներկայացրած դիմումի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ իրեն ուղղված դիմումում Թուխիկ Մարտիրոսյանը խնդրում է բուհի միջոցներից իրեն ֆինանսական աջակցություն հատկացնել, քանի որ ունի առողջական խնդիրներ և բուժում ստանալու համար պետք է հոգա հիվանդանոցային ծախսեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բավարարել Թուխիկ Համբարձումի Մարտիրոսյանի դիմումը և մինչև 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով հատուցել նրա բուժման ծախսերը՝ համապատասխան հիմքերի ներկայացման դեպքում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի ներբուհական ընդունելության քննություններն անցկացնող դասախոսների վարձատրության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Համալսարանի ներբուհական ընդունելության քննությունների հանձնաժողովների նախագահների և անդամների վարձատրությունը կատարել հետևյալ սկզբունքով.
1. յուրաքանչյուր քննության կազմակերպման և անցկացման համար դիմորդների կողմից վճարած գումարի 50 տոկոսը հավասարապես բաշխել քննության նախագահի և անդամների միջև:
2.Հանձնաժողովի նախագահներին և անդամներին հատկացնել համապատասխանաբար ևս 10 000 և 5000-ական ՀՀ դրամ՝ ավելացնելով 1-ին կետով նշված գումարին:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

5. Ընթացիկ հարցեր

5.1 ՇՊՀ-ի աշխատակիցների աշխատաժամերի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ջեռուցման սեզոնի ընթացքում հահամալսարանի աշխատակազմի աշխատաժամանակի ռեժիմում կատարել փոփոխություն, ընդմիջումը սահմանել 30 րոպե՝ ժամը 13.00 - 13:30-ը և աշխատանքային ժամի ավարտը սահմանել 17:30-ը:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2019-2020 ուստարի 1-ին կիսամյակ

Բակալավրի կրթական ծրագիր

Տնօրենների միջնորդագրեր

N	Ուսանողի ԱԱՀ	Ֆակուլտետ	Մասնագիտություն, կուրս	Պրակտիկա
1.	Մկրտչյան Սյուզաննա	Մանկավարժության	Տարր. մանկ. և մեթոդ. 4-րդ	Շիրակի մ. Լեռնակերտի միջն. դպրոց
2.	Բաղդասարյան Եսթեր	Մանկավարժության	Տարր. մանկ. և մեթոդ. 4-րդ	Շիրակի մ. Վարդաքարի միջն. դպրոց
3.	Բդոյան Կարինե	Մանկավարժության	Տարր. մանկ. և մեթոդ. 4-րդ	Շիրակի մ. Թավշուտի միջն. դպրոց
4.	Գրիգորյան Ռուզաննա Սամվելի	Մանկավարժության	Տարր. մանկ. և մեթոդ. 4-րդ	Շիրակի մ. Մեծ Մանթաշի միջն. դպրոց
5.	Զարգարյան Արթուր Վազգենի	Մանկավարժության	Ֆիզ. դաստ. և սպորտ. մարզ. 4-րդ	Տավուշի մ. Չորաթանի միջն. դպրոց
6.	Հովսեփյան Մելինե Լևոնի	Հում. գիտ. և արվեստի	Հայոց լեզու և գրական. 4-րդ	Շիրակի մ. Վահրամաբերդի միջն. դպր
7.	Գրիգորյան Ռիտա Գառնիկի	Հում. գիտ. և արվեստի	Հայոց լեզու և գրական. 4-րդ	Շիրակի մ. Ոսկեհասկի միջն. դպրոց
8.	Բարսեղյան Լիդա Վարդանի	Հում. գիտ. և արվեստի	Հայոց լեզու և գրական. 4-րդ	Շիրակի մ. Իսահակյանի միջն. դպրոց
9.	Այվազյան Սյուզաննա Սիրականի	Հում. գիտ. և արվեստի	Ռուսաց լեզու և գրական. 4-րդ	Շիրակի մ. Լեռնակերտի միջն. դպրոց
10.	Գալստյան Սյուզաննա Արգամի	Բնագիտամաթեմատիկ.	Կենսաբանություն 4-րդ	Շիրակի մ. Իսահակյանի միջն. դպրոց

2019-2020 ուստարի 1-ին կիսամյակ

Բակալավրի կրթական ծրագիր

Ուսանողների դիմումներ

N	Ուսանողի ԱԱՀ	Ֆակուլտետ	Մասնագիտություն, կուրս	Պ
1.	Գալստյան Շուշանիկ Միսակի	Բնագիտամաթեմատիկ.	ԻԿՄ 4-րդ	«Ինստիգ
2.	Մկրտչյան Տիգրան Արթուրի	Բնագիտամաթեմատիկ.	ԻԿՄ 4-րդ	«Այթիսփ

3.	Մինասյան Աննա Ավետիքի	Բնագիտամաթեմատիկ.	ԻԿՄ 4-րդ	«Աննանի
4.	Առաքելյան Սյուզաննա Աղվանի	Բնագիտամաթեմատիկ.	Կենսաբանություն 4-րդ	Շիրակի ս դպրոց

2019-2020 ուստարի 1-ին կիսամյակ

Մագիստրոսի կրթական ծրագիր, 2-րդ կուրսեր

Տնօրենների միջնորդագրեր

N	Ուսանողի ԱԱՀ	Ֆակուլտետ	Մասնագիտություն, կուրս
1.	Մխիթարյան Եպրաքսի	Հում. գիտ. և արվեստի	Հայոց լեզու և գրականություն
2.	Մելքոնյան Ամալյա	Հում. գիտ. և արվեստի	Ռուսաց լեզու և գրականություն
3.	Բենոյան Վարդուհի Հրաչի	Մանկավարժության	Տարր. մանկավարժ. և մեթոդիկա
4.	Նիկոլյան Գոհար Աբրահամի	Մանկավարժության	Տարր. մանկավարժ. և մեթոդիկա
5.	Մելիքյան Անուշ Գրիգորի	Մանկավարժության	Տարր. մանկավարժ. և մեթոդիկա

2019-2020 ուստարի 1-ին կիսամյակ

Մագիստրոսի կրթական ծրագիր

Ուսանողների դիմումներ

N	Ուսանողի ԱԱՀ	Ֆակուլտետ	Մասնագիտություն, կուրս	Պ
1.	Բասիլյան Լուսինե Համլետի	Մանկավարժության	Կրթ. կազմակերպում	Շիրակի մ. դպրոց
2.	Մելքոնյան Անահիտ Սուրիկի	Մանկավարժության	Կրթ. կազմակերպում	Շիրակի մ.
3.	Եղոյան Զինա Վաղինակի	Մանկավարժության	Կրթ. կազմակերպում	Գյումրու թ
4.	Կարապետյան Էմմա Երվանդի	Մանկավարժության	Կրթ. կազմակերպում	Գյումրու Ֆ հաստատ
5.	Կուրղինյան Անուշիկ Ավետիսի	Մանկավարժության	Սոց. մանկավարժություն	Լոռու մ.Ս մանկավա աջակցութ
6.	Ավետիսյան Արևիկ Ռոբերտի	Մանկավարժության	Սոց. մանկավարժություն	Լոռու մ.Ս դպրոց
7.	Խաչատրյան Ազատուհի Սասունի	Մանկավարժության	Տարր. մանկ. և մեթոդիկա	Շիրակի մ. դպրոց
8.	Ավագյան Արաքսյա Արամի	Մանկավարժության	Տարր. մանկ. և մեթոդիկա	Շիրակի մ.
9.	Մկրտչյան Գայանե Վալժանի	Մանկավարժության	Տարր. մանկ. և մեթոդիկա	Շիրակի մ. դպրոց
10.	Թադևոսյան Թամարա Սարգսի	Հում. գիտ. և արվեստի	Անգլ. լեզու և գրական.	Գյումրու «
11.	Մուրադյան Անժելա Իշխանի	Հում. գիտ. և արվեստի	Անգլ. լեզու և գրական.	Շիրակի մ.
12.	Ղազարյան Հերմինե Մանվելի	Հում. գիտ. և արվեստի	Անգլ. լեզու և գրական.	Շիրակի մ. դպրոց
13.	Հակոբյան Սուսաննա Արթուրի	Հում. գիտ. և արվեստի	Անգլ. լեզու և գրական.	Շիրակի մ. Ն. Աղբալյ
14.	Մելիքսեթյան Արեգնազ Վահրիճի	Հում. գիտ. և արվեստի	Հայոց լեզու և գրական.	Գյումրու Ս վարժարա
15.	Գրքիկյան Լալա Հովհաննեսի	Հում. գիտ. և արվեստի	Հայոց լեզու և գրական.	Գյումրու թ
16.	Իսրայելյան Սոնա Սամվելի	Բնագիտամաթեմատիկ.	ԻԿՄ	Երևանի «
17.	Սարգսյան Հերմինե Մխիթարի	Բնագիտամաթեմատիկ.	Աշխարհագրություն	Արագածո դպրոց
18.	Քոչարյան Թեհմինե Արթուրի	Բնագիտամաթեմատիկ.	Ֆիզիկա	Շիրակի մ. դպրոց

19.	Գալոյան Արեգնազան Հովհաննեսի	Բնագիտամաթեմատիկ.	Կենսաբանություն	Շիրակի մ. դպրոց
20.	Սերոբյան Անահիտ Պավելի	Բնագիտամաթեմատիկ.	Կառավարում	«Էվոկաբա
21.	Ալեքսանյան Արծրուն Սուրենի	Սոց. գիտ. և իրավունքի	Իրավագիտություն	Երևանի ը իրավասու
22.	Մուրադյան Տիգրան Անդրանիկի	Սոց. գիտ. և իրավունքի	Իրավագիտություն	Շիրակի մ Գյումրի ք
23.	Մալոյան Սոֆյա Աշոտի	Սոց. գիտ. և իրավունքի	Իրավագիտություն	Շիրակի մ Գյումրի ք
24.	Սիմոնյան Ռազմիկ Մերուժանի	Սոց. գիտ. և իրավունքի	Իրավագիտություն	Շիրակի մ Գյումրի ք
25.	Մարգարյան Դավիթ Ավետիքի	Սոց. գիտ. և իրավունքի	Իրավագիտություն	Շիրակի մ Գյումրի ք
26.	Աղաբեկյան Մերի Մորիսի	Սոց. գիտ. և իրավունքի	Հոգեբանություն	Գյումրու թ արհեստա
27.	Ալեքսանյան Արմենուհի Մարտիրոսի	Սոց. գիտ. և իրավունքի	Հոգեբանություն	Շիրակի տ մանկավա աջակցութ
28.	Տարախչյան Սոնյա Գեղամի	Սոց. գիտ. և իրավունքի	Հոգեբանություն	Շիրակի տ մանկավա աջակցութ
29.	Հովսեփյան Տաթևիկ Ալեքսանի	Սոց. գիտ. և իրավունքի	Հոգեբանություն	ՀՀ ՊՆ 609
30.	Վարդանյան Ռոզա Սեյրանի	Սոց. գիտ. և իրավունքի	Պատմություն	Գյումրու հ «Կումայրի արգելոց-թ
31.	Ավետիսյան Անի Սմբատի	Սոց. գիտ. և իրավունքի	Պատմություն	Գյումրու « ակադեմի

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար՝	Գ. Նիկողոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

Մանկավարժության ֆակուլտետի
դեկան՝ Ռ. Մարդոյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետի դեկան՝ Օ. Հովհաննիսյան

Ռազմական ամբիոնի պետ՝ Ա. Մկրտչյան

Անձն.կառ.նիրավ.ապահովման
բաժնի վարիչ՝ Ա. Հովհաննիսյան